ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2019 թվականի N:593-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՐԹԻԿԻ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N58-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և

սպորտի նախարարի 2019 թվականի հուլիսի 19-ի թիվ 01/07.1/13986-19 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 3-ի N410 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2019 թվականի հունիսի 25-ի նիստի թիվ 9 արձանագրությունը, ծնողական խորհրդի 2019 թվականի հունիսի 26-ի նիստի թիվ 6 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամներ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Արսեն Պետրոսյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Անահիտ Սահակյանի, Արթուր Գրիգորյանի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Կարեն Մկրտչյանի, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Ամալյա Տեր-Կարապետյանի, Կարինե Մարգարյանի, Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Սաթենիկ Սրապյանի, Սեդա Խանոյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված Վարուժան Խոջումյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Կարեն Բաղիշյանին, Գառնիկ Սիմոնյանին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Գևորգ Փթուկյանին, Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Աննա Խաչատրյանին, Նաիրա Կարապետյանին,

Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Լիլիթ Առակյանին, Սիրանուշ Պողոսյանին:

3. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի անվանական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի N51-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N58-Ա որոշման հավելվածում «Պետրոսյան Արսեն – Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված», «Սահակյան Անահիտ», «Գրիգորյան Արթուր», «Մկրտչյան Կարեն», «Մարգարյան Կարինե», «Տեր-Կարապետյան Ամալյա», «Խանոյան Սեդա», «Սրապյան Սաթենիկ» բառերը համապատասխանաբար փոխարինել «Խոջումյան Վարուժան - Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից առաջադրված», «Բադիշյան Կարեն», «Սիմոնյան Գառնիկ», «Փթուկյան Գևորգ», «Խաչատրյան Աննա», «Կարապետյան Նաիրա», «Առակյան Լիլիթ», «Պողոսյան Սիրանուշ» բառերով:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
/փոխարինող/

Իսկականի հետ ճիշտ է